

Ժամանակավոր միջոցառումներ

Գործնական տեղեկություններ

Ի՞նչ է ժամանակավոր միջոցառումը:

Դիմումը ստանալուց հետո Դատարանը կարող է պահանջել տվյալ պետությունից ձեռնարկել ժամանակավոր միջոցառումներ մինչև դիմումի վերաբերյալ որոշում կայացնելը: Այս դեպքերում սովորաբար Դատարանը պահանջում է պետությունից ձեռնպահ մնալ որոշ գործողություններից, ինչպես օրինակ, չվերադարձնել դիմումատուին այն երկիր, որտեղ նա կարող է հայտնվել մահվան կամ խոշտանգման վտանգի առաջ:

Դատարանի կողմից ժամանակավոր միջոցառումների կիրառումը շնորհվում է միայն հստակ սահմանված դեպքերում՝ այն է, երբ կա Կոնվենցիայի դրույթների լուրջ խախտման վտանգ: Ժամանակավոր միջոցառումների կիրառման դիմումների գերակշիռ մասը անհիմն է և հետևաբար մերժվում է:

Ինչպես դիմել Դատարան

Դատարանը ժամանակավոր միջոցառումների կիրառման դիմումների համար առանձնացրել է ֆաքսի հատուկ համար: +33 (0)3 88 41 39 00
+33 (0)3 90 21 43 50

Տեղեկացնում ենք, որ սույն համարը չօգտագործելու դեպքում Ձեր դիմումն անմիջապես չի ուսումնասիրվի՝ հատկապես արձակուրդի շրջանում: Հետևապես, ժամանակավոր միջոցառումներին վերաբերվող գրագրության համար խնդրում ենք օգտագործել վերոհիշյալ համարը:

Տարբեր և նամակներն ընդունվում են

- Երկուշաբթի-ուրբաթ 8:00-ից մինչև 16:30*
- 16 :30-ից հետո ուղարկված դիմումները նույն օրը չեն ուսումնասիրվի ([տոն օրերի ցանկ](#))

Դիմումը պետք է շարադրված լինի հնարավորինս ամփոփ և համառոտ: Այնուամենայնիվ խորհուրդ է տրվում 10 էջից ավել ծավալի դեպքում ֆաքսն

ուղարկել մաս առ մաս, որպեսզի բոլոր էջերը բարեհաջող ստացվեն և ուսումնասիրվեն:

* *Տեղական ժամանակով (GMT+1).*

Դիմումին կից տեղեկությունները և փաստաթղթերը

Փաստաթղթի առաջին էջին տեսանելի կերպով նշել հետևյալը՝

“Rule 39. Urgent”

Կոնտակտն ապահովող անձ (անունը և տվյալները)

Արտաքսման և արտահանման դեպքում հարկավոր է նաև տրամադրել հետևյալ տեղեկությունները՝

Երկրից վտարման ժամկետը (օրը, ժամը և ուղղությունը):

Ներկայացնել հիմնավոր, հստակ և ամբողջական դիմում:

Ժամանակավոր միջոցառումների կիրառման մասին դիմումը պետք է ներկայացվի դիմումատուի համաձայնությամբ և ցանկալի է՝ լրացված դիմումի ձևաթղթի հետ միասին: Եթե դիմումը ներկայացվում է ներկայացուցչի կողմից, ապա դիմումին պետք է կցել կամ հաջորդող մի քանի օրվա ընթացքում ներկայացնել լիազորագիր:

Կցել դիմումին առնչվող՝ մասնավորապես ազգային դատարանների և այլ ներքին ատյանների բոլոր որոշումների պատճենները:

Կցել Դատարանին ներկայացված գանգատը հիմնավորող բոլոր փաստաթղթերի կրկնօրինակները:

Դիմումի հետագա ընթացքը

Ժամանակավոր միջոցառումների կիրառման մասին խնդրանքն ուղարկելուց հետո, անհրաժեշտ է, որ դիմումատուն կամ նրա ներկայացուցիչը շարունակեն հետևել դրա ընթացքին: Դիմումատուի վարչական կարգավիճակի կամ այլ հանգամանքների փոփոխության մասին անհրաժեշտ է անհապաղ տեղեկացնել Դատարանին (օրինակ՝ դիմումատուին կացության քարտ շնորհելու կամ նրա ծննդավայր վերադառնալու մասին): Դիմումատուի հետ կապը կորցնելու փաստի մասին նրա ներկայացուցիչը պետք է ժամանակին և իր նախաձեռնությամբ հայտնի Դատարանին: